ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Իտալիայի Հանրապետություն (Հռոմ)
գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.
Նարեկ Մկրտչյան

2. Զբաղեցրած պաշտոնը.
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.
Հռոմ, Իտալիայի Հանրապետություն, հունիսի 15-ից 18-ը, 2022 թ.

4. Հրավիրող կողմը.
ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը.
Մասնակցություն «Կայուն աշխարհ բոլոր տարիքի համար. միավորելով ուժերը՝ հանուն ողջ կյանքի ընթացքում համերաշխության և հավասար հնարավորությունների» խորագրով նախարարական համաժողովին:

6. Քննարկված թեմաները.
Համաժողովի հիմնական նպատակը Ծերացման հիմնահարցերի մադրիդյան միջազգային գործողությունների պլանի չորրորդ վերանայումն էր, որը հաստատվել է 2002 թվականին և ընդունվել ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բոլոր անդամ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կողմից: Յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ կազմակերպվում է նախարարական համաժողով, որտեղ քննարկվում են անդամ պետությունների կողմից փաստաթղթի իրականացման ուղղությամբ արձանագրված ձեռքբերումները, առկա մարտահրավերները և հետագա անելիքները:

Համաժողովի առաջին օրը ներկայացվեց Ծերացման հարցերով Մադրիդյան միջազգային գործողությունների ծրագրի իրականացման տարածաշրջանային ռազմավարության սինթեզված զեկույցը և անցկացվեցին երեք պանելային քննարկումներ՝

- Ակտիվ և առողջ ծերացմանը խթանում ողջ կյանքի ընթացքում,
- Երկարատև խնամքի հասանելիության ապահովում. Ընտանիքներին և խնամակալներին աջակցություն,

- Ծերացման հիմնահարցի կարևորումը՝ բոլոր տարիքի համար հասարակության զարգացման նպատակով:

Համաժողովի երկրորդ օրը ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների նախարարների մասնակցությամբ տեղի ունեցան բարձր մակարդակի կլոր սեղան քննարկումներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ծերացման հարցերով նախարարական եռօրյա համաժողովի բացման նիստում ելույթ ունեցող հինգ երկրների շարքում Հայաստանի Հանրապետության անունից ներկայացրել եմ երկրում ծերացման խնդիրների վերաբերյալ Մադրիդյան միջազգային գործողությունների ծրագրի (MIPAA) շրջանակում արձանագրված արդյունքները:

Իմ ելույթում ընդգծել եմ, որ Հայաստանի կառավարությունը հավատարիմ է իր ստանձնած պարտավորությանը՝ տարեցների իրավունքների պաշտպանության, վերջիններիս հասարակական կյանքին լիարժեք մասնակցության և խտրականության դեմ պայքարի ապահովման ուղղությամբ, այդ թվում՝ Կայուն զարգացման նպատակների իրականացմանն ուղղված ազգային ջանքերի շրջանակում: Նշել եմ, որ մեր առաջնահերթություններից են՝ նպաստել տարեց անձանց աշխատանքային կյանքի երկարացմանը, վերջիններիս արդյունավետ, մատչելի առողջապահական ծառայությունների մատուցմանը, ակտիվ ծերացման հիմքերի ստեղծմանը:

Ներկայացրել եմ, որ ծերացող հասարակության ներկա միտումներին ու մարտահրավերներին համահունչ և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ սերտ համագործակցությամբ՝ 2021 թվականին մեկնարկել է նոր ծրագիր, որի նպատակն է բարելավել տարեցներին տրամադրվող խնամքի ծառայությունների որակը և ներդնել համայնքային ծառայություններ: Շեշտել եմ, որ ծերացման հարցերով կառավարության 2021-2023 թվականների գործողությունների ծրագրով սահմանված է նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությունների ընդհանուր շրջանակը, որն ուղղված է սոցիալական ծառայությունների համակարգի բարելավմանը, տարեցների տնտեսական անվտանգությանը և սոցիալական ներգրավվածությանը:

Համաժողովի ընթացքում մասնակցել եմ նաև «Իրավունքներ, առողջապահություն և արժանապատվություն. Ժողովրդագրական ճկունության ամրապնդում՝ օգտվելով բնակչության ծերացման հետ կապված հնարավորություններից» խորագրով հարակից միջոցառմանը, որի քննարկման առարկան այն բարեփոխումներն ու նախադրյալներն էին, որոնք անհրաժեշտ են ժողովրդագրական առումով ճկուն և ծաղկող հասարակություններ կառուցելու համար:

Այցի շրջանակում ունեցել եմ նաև մի շարք երկկողմ հանդիպումներ՝ տարբեր երկրների պետական պաշտոնյաների, ոլորտային կառույցների ներկայացուցիչների հետ:

Մասնավորապես՝ հանդիպում եմ ունեցել Իտալիայի Սենատի փոխնախագահ Պաոլա Տավերնայի հետ: Զրույցի առանցքում եղել են 2020 թ. ռազմական գործողություններից հետո արցախահայությանն ուղղված սոցիալ-տնտեսական միջոցառումները, հետպատերազմական ժամանակահատվածում ստեղծված իրադրությունը: Ներկայացրել եմ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից այդ ուղղությամբ իրականացված աջակցության ծրագրերը՝ առաջնային համարելով վերջիններիս համար արժանապատիվ կենսապայմանների ապահովումը: Խոսել ենք նաև հայ ռազմագերիների և քաղաքացիական անձանց՝ հայրենիք վերադարձի ապահովման գործընթացի մասին. շեշտել եմ միջազգային գործընկերների մասնակցության կարևորությունը:

Իտալիայի կառավարությունում հանդիպում եմ ունեցել Իտալիայի հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի նախարար Էրիկա Ստեֆանիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկել ենք երկու երկրների աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, նրանց տրամադրվող ծառայությունների հասանելիության ապահովմանը, անձի ֆունկցիոնալության և հաշմանդամության բազմակողմանի գնահատման չափորոշիչների համակարգի ներդրմանը և ապաինստիտուցիոնալացման քաղաքականությանն առնչվող մի շարք հարցեր:

Հանդիպում եմ ունեցել նաև Իտալիայի աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարար Անդրեա Օրլանդոյի հետ: Ընդգծելով երկու նախարարությունների՝ սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացմանն ուղղված շարունակական ջանքերի կարևորությունը՝ քննարկել ենք աշխատանքի և զբաղվածության քաղաքականության վերաբերյալ փորձի փոխանակման հնարավորությունները, ինչպես նաև աշխատանքային իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք հարցեր:

Հանդիպում եմ ունեցել նաև Ավստրիայի սոցիալական հարցերի, առողջապահության, խնամքի և սպառողների պաշտպանության դաշնային նախարար Յոհաննես Ռաչի հետ: Քննարկել ենք երկու երկրների սոցիալական պաշտպանության, մասնավորապես՝ աշխատանքի և զբաղվածության, հավասար հնարավորությունների ապահովման ոլորտներում իրականացվող և նախատեսվող բարեփոխումները, անդրադարձել համագործակցության ընդլայնման ուղղություններին:

Կարևորել ենք աշխատաշուկայում տարեցների ներգրավմանը, երեխաներին և միայնակ տարեցներին տրամադրվող խնամքի ծառայությունների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացումը: Այս համատեքստում ընդգծել ենք նաև քաղաքացիների աշխատանքի տեղավորմանն ուղղված ծրագրերի, զբաղվածության կենտրոններում կարիերայի ուղղորդման ծառայությունների և դրանց թվայնացման մեխանիզմների վերաբերյալ ավստրիական փորձի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Երկուսեք պատրաստակամություն ենք հայտնել աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության քննարկված տարբերակները տեղափոխել գործնական փուլ:

Հանդիպում եմ ունեցել Էստոնիայի սոցիալական պաշտպանության նախարար Սիգնի Ռիսալոյի հետ. վերջինիս հետ քննարկել ենք կենսաթոշակային ապահովության, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտներին առնչվող մի շարք հարցեր: Անդրադարձ ենք կատարել նաև աշխատանքի և զբաղվածության քաղաքականության, աշխատանքային վեճերի արտադատական լուծման համակարգի վերաբերյալ էստոնական փորձի ուսումնասիրման ու փոխանակման հնարավորություններին:

Անդրադառնալով ապաինստիտուցիոնալացման քաղաքականության կարևորությանը՝ շեշտել ենք երեխաների այլընտրանքային խնամքի համակարգի զարգացման, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին ինքնուրույն կյանքի հմտությունների ուսուցման ուղղություններով շարունակական աշխատանքների իրականացման կարևորությունը: Այս համատեքստում Էստոնիայի սոցիալական պաշտպանության նախարարը մանրամասներ է ներկայացրել իրենց գերատեսչության կողմից երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

Այցի շրջանակում Սուրբ Աթոռում, ՀՀ դեսպան Կարեն Նազարյանի ուղեկցությամբ, հանդիպումներ եմ ունեցել նաև հայ կաթողիկե եկեղեցու և հաստատությունների ներկայացուցիչների հետ: Մասնավորապես՝ հունիսի 15-ին այցել եմ Քահանայապետական Լևոնյան հայ վարժարան և Ս. Նիկողայոս եկեղեցի ու հանդիպել վարժարանի տնօրեն Հ. Նարեկ ծ. վրդ. Նամոյանին:

Նույն օրը Անարատ Հղության հայ քույրերի միաբանությունում հանդիպել եմ միաբանության ընդհանուր մեծավորուհի Մ. Արուսյակ Սաճոյանի հետ:

Հանդիպումներին ներկայացրել եմ սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերն ու առաջնահերթությունները,

կարևորել տվյալ բնագավառում սփյուռքում գործող կառույցների հետ ջանքերի մեկտեղումը և համագործակցությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ծերացման հարցերով նախարարական համաժողովի երկրորդ օրը ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների նախարարների մասնակցությամբ տեղի ունեցան բարձր մակարդակի կլոր սեղան քննարկումներ, որոնց արդյունքում ընդունվեց Նախարարական Հռչակագիր:

Երկկողմ հանդիպումների ընթացքում քննարկված համագործակցության հնարավորությունները գործնական փուլ տեղափոխելու համար ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, մասնավորպես՝ Իտալիայի հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի նախարար Էրիկա Ստեֆանիի հետ քննարկել ենք ընթացք տալ միջգերատեսչական հուշագիր պատրաստելու և ստորագրելու գործընթացին. սա հնարավորություն կտա համատեղել ջանքերը հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտում արդյունավետ համագործակցելու ուղղությամբ:

Իտալիայի աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարար Անդրեա Օրլանդոյի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց աշխատել փոխըմբռնման հուշագիր կազմելու ուղղությամբ: Նախարար Օրլանդոն հրավիրել է մասնակցելու Իտալիայի նախագահությամբ՝ սույն թվականի հոկտեմբերի 21-ին Բոլոնիայում կայանալիք Սոցիալական տնտեսության վերաբերյալ Լյուքսեմբուրգի հռչակագրի մոնիթորինգի կոմիտեի նախարարական հանդիպմանը:

Համագործակցության հուշագիր կնքելու հնարավորությունը քննարկել ենք նաև Ավստրիայի սոցիալական հարցերի, առողջապահության, խնամքի և սպառողների պաշտպանության դաշնային նախարար Յոհաննես Ռաչի հետ: Նախատեսել ենք, որ այդ փաստաթուղթը հնարավորություն կտա սերտացնել համագործակցությունն աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում:

Էստոնիայի սոցիալական պաշտպանության նախարար Սիգնի Ռիսալոյի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում ստեղծել աշխատանքային խմբեր՝ սոցիալական պաշտպանության ոլորտում առավել սերտ համագործակցելու նպատակով:

Քննարկվել է նաև անձին կենսաթոշակ նշանակելու (վճարելու) ժամկետների հետաձգման և ի հաշիվ դրա՝ կենսաթոշակի չափի ավելացման քաղաքականության էստոնական փորձը, պայմանավորվածություն է ձեռք բերվել կապեր ստեղծել երկու

նախարարությունների համապատասխան մասնագետների միջև՝ կենսաթոշակային ապահովության բնագավառում վարվող քաղաքականության փորձի, մասնավորապես՝ կենսաթոշակների նշանակման (վճարման) ժամկետների հետաձգման համակարգը Հայաստանում ներդնելու հնարավորությունը ուսումնասիրելու համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- Իտալիայի, Էստոնիայի և Ավտրիայի աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտը համակարգող գերատեսչությունների հետ արդյունավետ համագործակցելու և այցի շրջանակում ձեռք բերված պայմանավորվածությունները գործնական փուլ տեղափոխելու նպատակով՝ ստեղծել համապատասխան աշխատանքային խմբեր, սահմանել գործողությունների հստակ հաջորդականություն:

- Մեկնարկել աշխատանքներ՝ վերոնշյալ երկրների համապատասխան նախարարությունների հետ բազմոլորտ համագործակցության ընդլայնմանն ուղղությամբ, պատրաստել համատեղ ստորագրվելիք համաձայնագրերի, հուշագրերի նախագծերը:

Ստորագրությունը՝

Recoverable Signature

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ամսաթիվը՝ 22.06.2022